ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

МИНИСТР

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

MINISTER

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 52 66 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: minister@edu.am, www.edu.am

N 01/11.3/4212-14 «23» 04 2014թ.

Նախարարության ենթակայության

կազմակերպությունների ղեկավարներին

(ըստ ցանկի)

Տեղեկացնում եմ, որ ՀՀ կառավարության աշխատակազմի 2014 թվականի ապրիլի 15-ի թիվ 02/29.6/5453-14 գրությամբ ստացվել է ՀՀ վարչապետի պաշտոնակատարի հանձնարարականը՝ ի գիտություն ՀՀ կառավարության միասնական դիրքորոշումը «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի շուրջ ՍԴ-ի կայացրած որոշման վերաբերյալ: (կցվում է):

Կարևորելով այդ փաստաթուղթը ուղարկում եմ Ձեզ ի գիտություն:

ՀՀ ԿԳ նախարարի պաշտոնակատար Ա. Աշոտյան

Կատ. Ն. Կարապետյան
հեռ. 52-53-47

ՀՀ կառավարության միասնական դիրքորոշումը «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի շուրջ ՍԴ-ի կայացրած որոշման վերաբերյալ

ՀՀ սահմանադրական դատարանի ապրիլի 2-ի որոշումից հետո ստեղծվել է մի իրավիճակ, երբ այդ որոշմամբ հակասահմանադրական ճանաչված դրույթների գործել-չգործելու, ինչպես նաև այդ որոշման եզրափակիչ մասի տարբեր կետերի հակասության վերաբերյալ տարաբնույթ, իրարամերժ մեկնաբանություններ, պարզաբանումներ ու բացատրություններ են ներկայացնում մեր հանրությանը թե ՍԴ դիմած մի շարք պատգամավորներ, թե իրավաբաններ, հասարակական գործիչներ և լրագրողներ: Պարզ է, որ նման արձագանքները համարժեք են տարբեր ուժերի և անհատների սուբյեկտիվ շահերով թելադրված նպատակներին, ինչը քաղաքական տեսանկյունից միանգամայն բնական երևույթ է: Այդուհանդերձ, քաղաքական և անձնական նպատակներով իրավունքի ընկալման շփոթ առաջացնելն անընդունելի է:

Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հարկ է համարում հատուկ նշել, որ ՍԴ-ի որոշումների, հատկապես նաև այս որոշման մեկնաբանությունները, պետք է հիմնվեն բացառապես ՀՀ սահմանադրության, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի և նույն որոշման դրույթների վրա:

Այսպես՝

1) ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչել օրենքի 8 իրավադրույթներ, իսկ 7 դրույթներ ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում: Միևնույն ժամանակ, համաձայն որոշման եզրափակիչ մասի 7-րդ կետի, իրավական անվտանգությունը չխաթարելու նկատառումներով հակասահմանադրական ճանաչված բոլոր իրավանորմերի ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանվել սույն թվականի սեպտեմբերի 30-ը, ինչը նշանակում է, որ այդ դրույթները մինչև սեպտեմբերի 30-ը ժամանակավորապես պահպանում են իրենց իրավաբանական ուժը, այսինքն, գործում են, իսկ որոշմամբ սահմանված վերահաշվարկման պահանջը վերաբերում է մինչև սեպտեմբերի 30-ը կատարված և կատարվելիք կուտակային վճարներին.

2) համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի՝ հնարավոր է միայն երեք դեպք, երբ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումն ունենում է կամ կարող է ունենալ հետադարձ ուժ, երբ ճանաչվում է քրեական օրենսգրքի, վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենսգրքի դրույթի հակասահմանադրականությունը կամ, երբ ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշմանը հաղորդում է հետադարձ ուժ: Տվյալ դեպքում ՍԴ-ն ոչ միայն հետադարձ ուժ չի հաղորդել իր որոշմանը, այլև հետաձգել է դրանով անվավեր ճանաչված նորմատիվ ակտի դրույթների ուժը կորցնելու ժամկետը՝ մինչև սույն

թվականի սեպտեմբերի 30-ը, ինչը, համաձայն նույն հոդվածի 15-րդ մասի, նշանակում է, որ մինչև սեպտեմբերի 30-ը վիճարկվող դրույթները համարվում են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող.

3) ՀՀ սահմանադրական դատարանի որոշումից միանշանակ հետևում է, որ մինչև սեպտեմբերի 30-ը ամբողջությամբ շարունակում է գործել օրենքի 5-րդ հոդվածը, ինչը նշանակում է, որ այդ ժամկետում պարտադիր կուտակային բաղադրիչին պարտադիր կարգով մասնակցում են 1974 թ. հունվարի 1-ին և դրանից հետո ծնված վարձու աշխատողները, նոտարները, անհատ ձեռնարկատերերը: Բացի դրանից, համաձայն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի, նրանք պարտավոր են կատարել համապատասխան ամսական կուտակային վճար: Այս պահանջը նույնպես գործում է մինչև սեպտեմբերի 30-ը.

4) մինչև սեպտեմբերի 30-ը ամբողջությամբ գործում է նաև օրենքի 76-րդ հոդվածը: ՀՀ կառավարությունը փաստում է, որ նման հստակության պայմաններում մտացածին հակասություններ և տարընթերցումներ առաջացնելը, անկասկած, պայմանավորված է միանգամայն այլ շարժառիթներով, որոնց կարելի է անդրադառնալ այլ ձևաչափով:

Իսկ ներկայումս կոչ ենք անում բոլոր շահագրգիռ կողմերին մասնակցելու «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ օրինագծի մշակմանը, որոնց միջոցով օրենքը կհամապատասխանեցվի ՀՀ սահմանադրական դատարանի որոշման պահանջներին: